ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ 2013 Թ. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը 2005 թ. վավերացրել է Հայոց արքա Տիգրան Բ Մեծի (մ.թ.ա. 95-55) Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքի մնացորդները և 2006-2013 թթ. հնագիտական պեղումներ կատարել դրա տարածքում: Հուշարձանը, որը գտնվում է ԼՂՀ Ասկերանի շրջանում՝ Խաչենագետի աջ ափին, տարածվում է Վանքասար լեռան հարավարևելյան ներքնալանջին և դրան կից գոգավորության վրա՝ Արքայական աղբյուրների (Շահբուլաղ) հարևանությամբ:

2006-2012 թթ. իրականացված պեղումների արդյունքում բացվել են քաղաքի Ամրացված թաղամասի հարավային պարիսպների երկայնքով 450 մետր երկարությամբ ձգվող ժայռափոր հիմքերը, հյուսիսային պարիսպների՝ մինչև հինգ մետր բարձրություն ունեցող և շուրջ 175 մետր երկարությամբ հատվածը, Միջնաբերդի 83 մետր երկարությամբ ներքին պարիսպ-դարավանդը, Կենտրոնական թաղամասի միանավ բազիլիկ եկեղեցին՝ հարավային և հյուսիսային բակերով հանդերձ, Արքայական աղբյուրներին կից ջրավազանը, Ամրացված թաղամասի ստորոտում գտնվող ժայռափոր հնձանը: Հետախուզական պեղումներ են կատարվել Ամրացված թաղամասի ու Կենտրոնական թաղամասի մի քանի հատվածներում, վաղքրիստոնեական դամբարանադաշտում: Հայտնաբերվել են և մասնակի պեղվել քաղաքի Անտիկ առաջին թաղամասը և անտիկ կարասային դամբարանադաշտերից Արևելյան դամբարանադաշտը: Հետազոտվել են նաև քաղաքի մերձակայքում գտնվող պաշտամունքային-քարայրային համալիրը, նրա ստորոտով անցնող ժայռափոր ջրանցքը, Խաչենագետի ձախ ափին գտնվող վաղմիջնադարյան ամրոցը:

Տիգրանակերտի 2013 թ. հնագիտական պեղումներն սկսվել են հունիսի 25-ին և ավարտվել օգոստոսի 19-ին: Արշավախումբը երեք օր է հատկացրել Ամրացված, Կենտրոնական և Անտիկ թաղամասերի ամբողջ պեղված տարածքի մաքրման, մեկ տարվա ընթացքում առաջացած բուսածածկույթի վերացման և փլվածքների կարգավորման աշխատանքներին: Մաքրվել և կարգի են բերվել նաև այցելուների համար նախատեսված ներհուշարձանային արահետները:

Բուն քաղաքում պեղումներն ընթացել են երեք հիմնական տեղամասերում՝ Ամրացված թաղամասի հյուսիսային պարսպապատի շարունակության վրա, Անտիկ առաջին թաղամասում և Վաղքրիստոնեական տաճարի հյուսիսային բակում (նկ. 1): Պեղման և մաքրման աշխատանքներ են իրականացվել նաև XVIII դարի ամրոցի հյուսիսային լանջին տեղադրված XIX դարի կառույցի տարածքում, Գյավուրկալա հուշարձանում, Մարդակերտ

քաղաքի տարածքում և շրջակայքում: 2013 թ. պեղման ամբողջ մակերեսը կազմել է շուրջ 1200 քառակուսի մետր, միջին խորությունը՝ երկու մետր:

Հյուսիսային պարսպապատի հատվածում, որտեղ պեղումներն իրականացրել են Վարդգես Սաֆարյանը և Արմինե Գաբրիելյանը, բացվել է պարսպի շարունակության նոր՝ 32 մետրանոց հատվածը: Այսպիսով, հյուսիսային պարսպի բացված հատվածի երկարությունը կազմում է շուրջ 210 մետր, որն այստեղ պահպանվել է մեկ-երկու կվադրի բարձրությամբ, որոշ հատվածներում այն ավերված է մինչև ժայռափոր հիմքը: Այս հատվածում բացվել է նաև հերթական ուղղանկյուն աշտարակը՝ 8,4*8,4 մետր չափերով: Կարող ենք հավաստել, որ ինչպես հարավային պարսպի պարագայում՝ հյուսիսային պարսպում ևս կլոր և ուղղանկյուն աշտարակները մեկընդմեջ հաջորդում են միմյանց: Աշտարակը պահպանվել է երկուսից երեք շարքերի բարձրությամբ, աչքի են զարնում բավականին խոշոր կվադրները, որոնց ծավալը հասնում է մինչև 0,4 խորանարդ մետրի, իսկ քաշը գերազանցում է մեկ տոննան: Կարելի է նկատել, որ կվադրների մշակումը պարսպի ստորին հատվածներում վերևինի համեմատությամբ փոքր-ինչ անփույթ է:

2013 թ. պեղումները երևան են բերել պարսպին կից մի շարք աղյուսաշեն պատեր՝ կառուցված քարե միաշարք կամ երկշարք հատուկ հիմքերի վրա: Առատորեն օգտագործված են տարբեր չափերի աղյուսների: Այս հատվածի պեղումների ընդարձակումը հնարավորություն է ընձեռում պարզելու աղյուսաշեն կառույցների իրականացման մանրամասն տեխնոլոգիան՝ հողահարթակի, պատի հիմքի քարաշեն հարթակի ստեղծում, հում աղյուսների տեղադրում: Չի բացառվում, որ որոշ դեպքերում պարսպին կից ներսից ստեղծվել են նաև աղյուսաշեն հարթակներ: Հետագա պեղումներն այստեղ հնարավորություն կընձեռեն նաև պարզաբանելու, թե աղյուսաշեն պատերն ու հարթակները ժամանակագրորեն ինչպես են հարաբերվում պարսպապատին. արդյո՞ք դրանք կառուցվել են քարե պարսպի հետ համատեղ, թե՞ հավելվել են հետագայում: Գտածոների մեջ գերակշռում են անտիկ խեցանոթների բեկորները, առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում անտիկ ծորակավոր սափորի վերնամասը, մեծ կարասի գոտեզարդ պսակն ու իրանի բեկորները, փոքր տափաշիշը և այլն:

Անտիկ առաջին թաղամասում ամբողջանում է ստորին՝ մ.թ.ա. I դարի կառույցների տեսքը (պեղումներն այստեղ իրականացրել է Ինեսա Կարապետյանը): Կարելի է փաստել առանցքային պատի երկու կողմերում տեղադրված, ուղղանկյուն սենյակներից բաղկացած համալիրների առկայությունը, որոնք ունեն ակնհայտ երկրագործական տնտեսավարման նշանակություն. սենյակներում պարտադիր են կրաքարե մեծ սանդերը, աղորիքները: Բացված համալիրները հնարավորություն են տալիս հավաստելու կառուցողական և ժամանակագրական երեք շրջանի՝ վերին՝ վաղմիջնադարյան, միջին՝ ուշ անտիկ և ստորին՝ ուշ հելլենիստական շերտերի գոյությունը: Պեղումները, երկրագործական տնտեսությանը վերաբերող գտածոներից զատ, տալիս են բարձրորակ հարուստ խեցեղեն, ջուլհակությանն առնչվող

հում կավից պատրաստված բազմաթիվ կախիկներ: Հարկ է առանձնացնել ներմուծված կավանոթների առանձին օրինակները:

Ուշագրավ գյուտեր են արձանագրվել բազիլիկ տաճարի հուսիսային բակի պեղումների շնորհիվ, որոնք իրականացրել են Տատյանա Վարդանեսովան և Համլետ Պետրոսյանը: Այստեղ դեռ նախորդ տարիներին բացված սալահատակի հետազոտությունը մեծ անակնկալ մատուցեց: Պարզվում է, որ եկեղեցուն զուգահեռ առկա են մոնումենտալ մեկ այլ շինության մնացորդներ՝ շարված սրբատաշ բլոկներով, կրաշաղախով: Կառույցն ունի սրբատաշ սալերով իրականացված հատակ, որը ձգվում է արևուտքից արևելք: Հետագա պեղումները պարզաբանեցին, որ գործ ունենք եկեղեցական մի նոր կառույցի հետ, որի երկարությունը շուրջ 17 մետր է, իսկ լայնությունը՝ 8,5 մետր: Այն եռաստիճան հիմնախարսխի վրա կառուցված, արտաքուստ շեշտված կիսաշրջան ապսիդով բազիլիկա է՝ հարավային և արևմտյան մուտքերով: Դեպի հարավային մուտք առաջնորդող սալահատակի հատվածն իրականացված է խոշոր սալերով, որոնց շարքում օգտագործված է նաև մարդակերպ քարակոթող: Այս կոթողների հետազոտությամբ զբաղվում է արշավախմբի անդամ Նժդեհ Երանյանը: Այս տարի Տիգրանակերտի շրջակայքում հնարավոր եղավ վավերացնել նման չորս նոր կոթող ևս: Եկեղեցու աբսիդի պեղումները նույնպես անակնկալ մատուցեցին: Պարզվեց, որ աբսիդի հատակի նիշից մեկուկես մետր խորության վրա առկա է մեկ այլ սալահատակ: Այն ավելի հին կառույցի մնացո՞րդ է, թե՞ աբսիդին ներկառուցված խուց՝ կպարզեն հետագա պեղումները: Նորահայտ եկեղեցու արևմտյան կողմում բացվել է գերեզմանատուն: Հատկապես ուշագրավ է ամբողջությամբ պահպանված վաղքրիստոնեական սարկոֆագը՝ բաղկացած քարե ամբողջական բլոկից պատրաստված դագաղից և երկթեք կափարիչից: Առանձնահատուկ ուշադրության է արժանի բրգաձև կնիքի գյուտը:

Եկեղեցուն կից հատվածում ուշագրավ են նաև XII-XIII դարերի կացարանների մնացորդները, որոնք ունեն լավ տոփանված կամ կավածեփ հատակներ, փոքր թոնիրներ, մեծ տնտեսական հորեր, որոնք բազմիցս քանդել են եկեղեցու բակի սալահատակը:

Տիգրանակերտի շրջակայքում գտնվող Գյավուրկալա վաղմիջնադարյան բնակավայրում հետախուզական աշխատանքներն իրականացրել են Լյուբա Կիրակոսյանը, Նժդեհ Երանյանը և Համլետ Պետրոսյանը: Մաքրվել է վաղքրիստոնեական եկեղեցին, պեղվել է վաղքրիստոնեական մեկ սալարկղային թաղում, որտեղ որպես վերին սալ վերօգտագործվել է մարդակերպ կոթողի կեսը: Գերեզմանոցում կուտակված սարկոֆագների բեկորների թվում գտնվել են քարե թևավոր խաչի մնացորդներ:

XVIII դարի ամրոցի հյուսիսային լանջին շարունակվել են դեռևս 2006 թ. մասամբ մաքրված կառույցի մնացորդները: Հետազոտվել են Մարդակերտ քաղաքում հողային աշխատանքների ժամանակ բացված անտիկ կարասային թաղումները, որտեղ ի հայտ են եկել խիստ հետաքրքրական խեցանոթներ:

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1. Հյուսիսային պարիսպը

2. Նորաբաց աշտարակը

3. Անտիկ թաղամասը

4. Անտիկ թաղամասը

5. Նորաբաց եկեղեցին

6. Վաղ քրիստոնեական սարկոֆագը